ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **17/06/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սիմոն Բաբայանը, Արտավազդ Խաչատրյանը, Սոնա Կարապետյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1.Վայք համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի հերթական հհունիսի 17-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի 2022թ. բյուջեի ծրագրային և ծախսերի տնտեսագիտական հոդվածների միջև վերաբաշխում կատարելու մասին:
3.Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:
4.Վայք համայնքի Վայք քաղաքի վարչական տարածքից Վայք

համայնքին աղբավայրի համար հող հատկացնելու մասին:
5.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող գազատար խողովակաշարերը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:
6.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողատեսքերը աճուրդով վաճառքի ներկայացնելու մասին:
7.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:
8.Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ ու 4-րդ կետերի պահանջներով.

1.Բյուջետային ծախսերում կատարել 1200000 դրամի չափով նվազեցումներ, որից՝ ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 1 խմբի 2 դասի տնտեսագիտական դասակարգման 4891 «Պահուստային միջոցներ» հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 1200000 դրամով՝ սահմանելով 13800000 դրամ:
2. Բյուջետային ծախսերում կատարել 1200000 դրամի չափով ավելացումներ, որից՝ ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4222 «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 1200000 դրամով՝ սահմանելով 1200000 դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ն/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 34-րդ կետի և35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել «Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնիանդամության դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ն/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի Վայք քաղաքի վարչական տարածքից 5.0 հա հողամաս հատկացնել համայնքում՝ աղբավայր կառուցելու համար:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով

1.Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ջառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող ներքոհիշյալ ցածր ճնշման վերգետնյա գազատար խողովակաշարերն անհատույց օգտագործման իրավունքով, 20 տարի ժամկետով , հատկացնել «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին:

1.1/ Ջառիթափ 1-ին փողոց. 21/2 D-57.0մմ, L -3.5մ, D -108.0մմ, L -12.0մ,
1.2/Ջառիթափ 1-ին փողոց 51 D-57մմ, L -99մ/,
1.3/Ջառիթափ 1-ին փողոց 53 D-57մմ, L -100մ /,D-108մմ, L-12մ,
1.4/Ջառիթափ 1-ին փողոց 55 D-57մմ, L -113.5մ , D-108մմ, L -12.5մ,
1.5/Ջառիթափ 1-ին փողոց 1-ին փակուղի 6 D-57մմ, L -60մ,
1.6/Ջառիթափ 2-րդ փողոց 28. D-42մմ, L -24մ , D-57մմ, L -13.5մ/,D-76մմ,L-8մ,
1.7/Ջառիթափ 2-րդ փողոց 1-ին փակուղի 12 D-57մմ, L -116.5մ:
1.8/Ջառիթափ 2-րդ փողոց 2-րդ փակուղի 17 D-57՝ 228.5մ, D-76՝12մ,D- 108՝ 12մ
1.9/Ջառիթափ 2-րդ փողոց 4-րդ փակուղի 17 D-42մմ, L -33մ,D- 57մմ,L-12.4մ,
1.10/Ջառիթափ 2-րդ փողոց 5-րդ փակուղի 1 D-57մմ, L -149.7մ, D-76մմ, L-8.5մ,
1.11/Ջառիթափ 3-րդ փողոց 3-րդ փակուղի 9 D-57.0մմ, L -49.5մ,
1.12/Ջառիթափ 4-րդ փողոց 43 D-57մմ, L -201.2մ,
1.13/Ջառիթափ 7-րդ փողոց 41/1 D-57մմ, L -433.4մ,
1.14/Ջառիթափ 8-րդ փողոց 19 D-57մմ, L -77մ,
1.15/Ջառիթափ 11-րդ փողոց 39 D-42մմ, L -192.0մ, և D -57մմ, L-343,1մ,
1.16/Ջառիթափ 15-րդ փողոց 22 D-57մմ, L -47մ, D-76մմ, L-9մ,
1.17/Ջառիթափ 15-րդ փողոց 18 D-57մմ, L -39մ,
1.18/Ջառիթափ 16-րդ փողոց 12 D-42մմ, L -47մ, և գազատար D-57մմ, L-111մ,
1.19/Ջառիթափ 18-րդ փողոց7 D-57մմ, L -35.4մ, D-42մմ, L-129մ,
1.20/Ջառիթափ 18-րդ փողոց 2-րդփակուղի 16 D-57մմ, L -61մ, D-42մմ, L-51մ,
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Վայք համայնքի Վայք քաղաքի վարչական տարածքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատեսքը ներկայացնել աճուրդով վաճառքի.
1լոտ-ծածկագիր 10-003-0024-0338 0,00272 հա,
2.Վայք համայնքի Սարավան բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության գործառնական նշանակությունը կամ հողատեսքը այլ հողեր.
1լոտ - ծածկագիր 10-039-0001-0013 0,11 հա,
1լոտ-ծածկագիր 10-039-0009-0001 1.29251 հա,
2.1Վայք համայնքի Սարավան բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակությունը արոտավայր և այլ հողատեսք.
1լոտ- 10-039-0331-0026 3,11417 հա արոտ, ծածկագիր 10-039-0,324-0006 0,18039 հա այլ հողատեսք, ծածկագիր 10-039-0324-0008 0,08648 հա այլ հողատեսք:
3.Աճուրդի համար մեկնարկային գին սահմանել հողատեսքերի կադաստրային արժեքների 100%-ը, քայլը մեկնարկային գնի 10%-ը:
4,Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի սեպտեմբերի 16–ին, ժամը՝ 15:00–ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին», օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ և 15-րդ կետերով.

1.Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 1.22505 /ծածկագիր 10-028-0174-0012/ հա գյուղատնտեսական այլ հողատեսքը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության /ձկնաբուծական արհեստական լճակներ կառուցելու համար/:
2.ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____